# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

<< 22 >> ապրիլ 2015 N- 54.
ք. Եղեգնաձոր

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ <<ԱՐԵՆԻ>> ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ, <<ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, << ՋԱՌԻԹԱՓԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, << ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ՀՌԻՓՍԻՄԵ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի՝ 2015թ. ապրիլի 11-ի թիվ 01/14.21/1730-15 գրությունը՝

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ

1. Ստեղծել հանձնաժողով՝ <<Արենի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն, <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Ջառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների հաշվեկշռում գտնվող շենքերը և շինությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու նպատակով:

2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնման աշխատանքներին մասնակից դարձնել առողջության կենտրոնների տնօրեններին և հաշվապահներին:
4. Հանձնման աշխատանքների կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Սամվել Շահբազյանի վրա:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի*
*2015թ. ապրիլի 22-ի թիվ 54*
*կարգադրության՝*

***ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող <<Արենի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն, <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների շենքերի հանձնման նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմը՝***

1. *Սամվել Շահբազյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),*
2. *Ռուբիկ Մինասյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),*
3. *Աննա Սաֆարյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ):*

***ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝*** ***Կ. Սահակյան***